

Դաշնակցութեան ու ազգային պայքարի շուրջը կարգ մը շխտակ յայտարարութիւններ ընելէ յետոյ, կուգայ վերստին հայկական մարքսիզմի անախորժ մշուշը, որ կը մթնացնէ Գ. Անանունի մտաւոր ու բարոյական գիտակցութիւնը եւ ցոյց կուտայ, որ անոր համարձակ ազդարարութիւնը իր պատմութեան «անաչառութեան» վերաբերմամբ եւ քանի մը դրուատական խօսքերը Դաշնակցութեան որոշ գործերու մասին, դրուած են լոկ ձեւի համար, ինչպէս կ'ըսեն՝ «թող փշելու» համար:

Որքան ալ ուժեղ ու իրական լինի անոր ճիշդ անաչառ լինելու, այնուամենայնիւ հայ սօցիալ-դէմօկրատ պատմագիրը, տարաբարտարար, անկարող կը յայտնուի ինքը գնելու իր արծարծած խնդիրներու բարձրութեան վերայ եւ կը սայլաքարի... Վասնզի պատմութիւնը խեղաթիւրելու արատը Ազգային մեղքի նման փաթաթուած է մասնաւորապէս հայ մարքսիստի եւ ընդհանրապէս այն բոլոր հակառակորդներու հոգիներուն, որոնց կը վիճակուի մեր վերջին երեսնամեակի պատմութիւնը գրելու եւ Դաշնակցութեան աշխատանքը վերլուծելու:

Երկու էջ յառաջարանը եւ 5-6 էջ նախարանը կը մասնեն արդէն այդ տխուր մտայնութիւնը եւ կը հաստատեն, որ հեղինակը պատմութիւն չի գրեր, այլ, հաւատարիմ հին սովորութեան, ազխտացիա կ'ընէ:

Ահա մէկ կողմէն քանի մը ջերմ, կազդուրիչ տողեր հայոց անկախ Հանրապետութեան շուրջը, որու ստեղծման մէջ, եթէ չենք սխալիր, դեր մ'ունեցած է Դաշնակցութիւնը:

«Դարերի խորհուրդը, հին պատգամն իրականացաւ 1918 թ.»... Հայ ժողովրդի ոգին մաքրուեց մահմետական տիրապետութեան յոռի ժառանգութիւնից: Եւ նա անզուսպ մղումն ունեցաւ խարսխուելու հայերի երկրում եւ այն արդասաւորելու իր շինարարական հնարաւորութիւններով... Սուլթանական մուրճը եւ ցարական սայլը կաշկանդեցին մեր ձեռքն ու ոտքը: Նրանք խուզեցին մեր հոգու թեւերը եւ կամեցան այն վերջնականապէս գերեզման իջեցնել: Հայը դարձաւ արեւ-այրած եւ անձրեւ-ձեռած խեցի, բայց անօթ նոր ոգորման ու նոր աշխատանքի: Իր այս վիճակում նրան թի-

կունք կանգնեց ուսական մեծ յեղափոխութիւնը*):

Այս բոլորը, ըստ երեւոյթին, խանդավառ ներբողական մըն է այն իրողութիւններու եւ ձգտումներու, որոնք կը կազմեն բուն իսկ Դաշնակցութեան էութիւնն ու պատմական առաքելութիւնը եւ որոնց իրականացումը հայկական անկախ Հանրապետութեան մէջ՝ կը պարտինք դէթ չափով մը նոյն Դաշնակցութեան: Կը կարծենք, թէ Գ. Անանուն չի կրնար ժխտել, որ նոյնիսկ Սարգստապատի եւ Ղարաքիլիսայի յաւէտ յիշատակելի կոիւնները, որոնք, իր վկայութեամբ իսկ, այնքան վճռական դեր խաղացին հայոց անկախութեան նրուածումի մէջ, չեն մղուեր առանց Դաշնակցութեան ամենագործօն մասնակցութեան ու ղեկավարութեան:

Կարդացէ՛ք, սակայն, նոյն 693-րդ էջի վերջին տողերը:

«Հայ բանուորը՝ եթէ նա գիտակ է հայրենիքի պատմութեան անցեալին ու խորհրդրդին, պիտի տողորուի բարձր հրճուանքով ու հպարտութեամբ՝ որ իր դասակարգի շարժումն ու դաւանանքը լուծեց հայկական կրնճիւրը: Նրանից առաջ մեծատուններն ու արտօնեակները սեղան փստեցան իրանց նմանների հետ եւ կամեցան հայրենիքի ու քաղաքական ինքնագլխութեան տէր դառնալ: Բայց որովհետեւ այդ արտօնեակներն ու մեծատունները խարդախութեան ու շահագործման շաղաղ ընթացան, ոչինչ չշահեցին իրանց յոգնութիւնից*» եւ հայ բանուորին ու ղեկացուն ժառանգութիւն թողին մի աւեր ու անօգնական երկիր: Այժմ յետին դասակարգը, որի քաղական կարգը չէին հարցնում արտօնեակները, որն օր ու արեւ էր մաշում նրանց դռներում, այդ յետին դասակարգը, ունկնդրելով պատմութեան թելադրանքին՝ թէ բազում առաջինք եղիցին յետինք եւ յետինք առաջինք, իր վրայ է վերցնում պատմութեան կտակը եւ այն իրագործում փայլուն բովանդակութեամբ: Մեծագործութիւն է սա, որից հրաժարուելու իրաւունք չունի հայ աշխատաւորը: Մեծագործութիւն՝ որով նա կարող է հպարտանալ ի-

*) էջ 693

*) Ստորագծողը մենք ենք: Մ. Վ.